ՀՏԴ : 791.4(479.25)+745/749(479.25)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 1960-ԱԿԱՆ ԹԹ.

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

Հոդվածում ներկայացվում են 1960-ական թվականներին կառուցված տիպային և անհատական նախագծերով կատարված հայաստանյան կինոթատրոնների ինտերիեր դիզայնը, դրանց հորինվածքային, գոտևորման, ոճական, տեխնիկական հարցերը և լուծումները: Հոդվածի շրջանակներում առանձնապես շեշտադրվում են այս շրջանում կառուցված լավագույն կինոթատրոնների օրինակները, որոնք առ այսօր հիշվում են և բարձր գնահատականի արժանանում ճարտարապետների և դիզայներների կողմից:

Բանալի բառեր՝ տիպային, կինոթատրոն, ինտերիեր, դիզայն, կինոդահլիճ, հատակագիծ, էկրան:

Ներածություն

Հայկական ճարտարապետության և ինտերիեր դիզայնի կայացման գործում մեծ կարևորություն ունի խորհրդային ժամանակաշրջանը: Հատկապես այս շրջանում ձևավորվեցին տարբեր նշանակություն և բնույթ ունեցող կառույցների տիպաբանական առանձնահատկությունները, այդ թվում նաև կինոթատրոնների գեղագիտական, ճարտարապետական, ճարտարագիտական, ինչպես նաև ոճական պահանջները: Այս առումով հատկապես կարևորվում է 1960-ական թվականներին կառուցված կինոթատրոնները՝ «Կոմիտաս», «Արագած», «Լալվար», ինչպես նաև հայտնի «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը, որը դարձավ մոդեռնիստական ճարտարապետության և դիզայնի խորհրդանիշներից մեկը:

Հիմնական նյութի շարադրանք

1961-ին Ա. Թարխանյան, Ս. Խաչիկյան և Հ. Պողոսյան ճարտարապետական հայտնի եռյակը՝ Է. Արևշատյանի և կոնստրուկտոր

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ, ruza_mik@yahoo.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

Ս. Բաղդասարյանի հետ «Հայպետնախագիծ» ինստիտուտում կատարեցին համատեղ լայնամասշտաբ նախագիծ: Այդ կինոթատրոնները տեղադրվեցին Երևանի և մարզերի, քաղաքների վարչական շրջաններում: Կինոթատրոնները մուտքի հատվածից արևելքից արևմուտք տեղակայված են 10 թռիչքի, իսկ հյուսիսից հարավ՝ 9 ավելի լայն թռիչքների վրա:

Ճարտարապետություն: Կինոթատրոնների ճարտարապետությունը խիստ երկրաչափական ուղղանկյուն և քառանկյուն ձևերից կազմված ծավալ է՝ տեղադրված առաջին և երկրորդ հարկերում: Գլխավոր ճակատը լուծված է պարզ և հստակ: Այն մուտքային ապակեպատ հատված է, որի վերևում գրվում է կինոթատրոնի անվանումը: Բոլոր կինոթատրոնների ճակատները երեսպատված են վարդագույն և մուգ նարնջագույն տուֆով՝ միդիս քարաշարվածքով: Մուգ տուֆով կազմված գծային ժապավենը եզերում է երկրորդ հարկը բոլոր չորս կողմերից: Ետնաճակատի կողմից ճարտարապետները նախատեսել են հավելյալ մուտք, որն աստիճաններով տանում է դեպի երկրորդ հարկ:

Հատակագիծ: Հատակագիծը դահլիճի հատվածում դուրս ցցված, ուղղանկյունաձև ուրվագիծ է: Գոտևորումը կատարված է հստակ, առանց ավելորդ մակերեսների գործածման: Առաջին հարկը զբաղեցնում է մուտքի հատվածը, որին անմիջապես հաջորդում է ճեմասրահը, որը միջնորմով կամ պատով չի առանձնանում դահլիճից: Ճեմասրահի ճիշտ կազմակերպումը թույլ էր տալիս անցկացնել ցուցահանդեսներ, միջոցառումներ[1]: Կինոթատրոնների տոմսարկղերը տեղակայված են մուտքի և դահլիճի միջև գտնվող հատվածում և ծառայում են որպես պայմանական բաժանարար հարթություն նրանց համար: Հատակագծի ուրվագիծը բարդանում է երկու ուղղանկյուն ծավալների հատման տեղում՝ կորաձև լծորդվելով: Երկրորդ հարկում տեղակայված են դահլիճը, կինոխցիկը, վերափաթաթման սենյակը, կինոմեխանիկի սենյակը:

Կինոդահլիճների հատակագիծ: Կինոդահլիճների հատակագիծն ուղղանկյունաձև ուրվագծային ծավալ է: Դիտադահլիճային սրահը, մուտքերը և ելքերը գտնվում են էկրանի հետևում և ճեմասրահից

[1] «Հայպետնախագիծ» ինստիտուտի արխիվ, պատվերի համար. 2-06A-09/61:

բաժանում չունեն: Աղեղնաձև լայնէկրանի դիմաց գտնվում է պարտերը, որը չունի կանոնավոր դասավորություն և պարտերի երկայնական առանցքի բաժանումներ: Կինոդահլիճները զբաղեցնում էին մոտ 460 քմ տարածք: Անմիջապես կինոդահլիճների հետևում գտնվում էին իրար կողքի դասավորված պրոյեկտորային գոտին, կինոմեխանիկի սենյակը: Հարկ է նշել, որ պրոյեկտորային սենյակին հատկացվել է բավականին մեծ մակերես:

Կինոդահլիճների փռվածք և կտրվածք: Լայնէկրան կինոդահլիճը տեղակայված է առաջին հարկում և երկրորդ լույսի բացվածքով առաջին և երկրորդ հարկում: Որպես գերիշխող տարր կարելի է նշել կինոդահլիճի աղեղնաձև էկրանը, որն իր ժամանակի համար լավագույններից մեկն էր Երևանում և ուներ մոտ 4.6 մ բարձրություն և 11.6 մ երկարություն: Դահլիճի թեքությունը թույլ է տալիս 12 սմ-ով ավելացնել և բարելավել դահլիճի դիտողականության անկյունը: Արտաքին պարզությունը շարունակվում է նաև դահլիճի ինտերիերում՝ ստեղծելով զսպված ձևեր: Կտրվածքն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում դահլիճի զսպված և պարզ հայեցակարգը: Դահլիճի տարհանման ելքերը և մուտքերը գտնվում են կողապատերին: Դահլիճի կողապատերի վերին մասում մետրիկ շարվածքով տեղակայված են պատուհանները:

Կինոդահլիճների առաստաղը: Կինոդահլիճների առաստաղը 12 սմ բարձրությամբ կողասալերով (ребристые плиты) կախովի կոնստրուկցիա է, իսկ արտաքին երեսապատումը կատարված է սովորական ներկապատման միջոցով: Առաստաղի վերևում առկա է հավելյալ մակերես, ըստ երևույթին, դահլիճի օդափոխությունն ապահովելու համար: Առաստաղը չունի բարդ ձևեր. այն հարթ ծավալային հորինվածք է:

Դասավորություն և էլեմենտներ: Կինոդահլիճի նստարաններն ունեն ամֆիթատրոնային շարվածք: Դահլիճի դիմային մասում տեղակայված էկրանն ունի աղեղնաձև ճկվածք, որը թույլ է տալիս ճիշտ անկյան տակ ընկալել ֆիլմը: Հենց հեղինակների կողմից նշվում է օթյակների անհրաժեշտ չլինելու փաստը ի հաշիվ կինոդահլիճի մեծ թեքության[2]: Լավ է մտածված կինոդահլիճի և կինոմեխանիկի սենյակի հետնամասում գտնվող ծառայողական մուտքը, քանի որ կինոմեխա-

[2] «Հայպետնախագիծ» ինստիտուտի արխիվ, պատերի համար. 2-06A-09/61:

նիկի համար նախատեսված մուտքն ապահովում է նրա անխոչընդոտ տեղաշարժը առանց դահլիճ մտնելու:

Գունային լուծումները: Տիպային կինոթատրոններից յուրաքանչյուրում գունային լուծումները տարբերվում են միմյանցից, այնուամենայնիվ կարելի է նշել, որ ինչպես էքստերիերում, այնպես էլ ինտերիերում ընտրված են զուսպ երանգներ: Աթոռների պաստառապատումը նույնպես կատարված է տարբեր երանգավորումներով՝ կապույտ, կարմրանարնջագույն: Առանձնահատուկ գունաերանգային ակտիվություն ունի ճեմասրահի խճանկարային հատակը՝ մուգ և բաց մոխրագույնի, ինչպես նաև սպիտակի համադրմամբ:

Ֆակտուրա և տեքստուրա: Ի տարբերություն գունային զուսպ երանգների՝ ֆակտուրային լուծումներն ավելի ակտիվ են և բազմատեսակ: Ճեմասրահների հատակները սալիկապատված են շքեղ դավալինյան մարմարի և Աղվերանի մարմարի նուրբ համադրությամբ: Դավալինյան մարմարի հարուստ բնական տեքստուրան դինամիկա է հաղորդում՝ միաձուլվելով սպիտակ, զուսպ, հարթ ֆակտուրայի հետ: Ճեմասրահի պատերի երեսապատումը կատարված է սվաղով և ներկված է: Ճեմասրահի առաստաղը փայտե շիթերով պաստառապատված և սեղմված ստվարաթղթային շերտ է: Դահլիճում օգտագործվել են ակուստիտական հատուկ սվաղ և սովորական ներկապատում: Դահլիճը հատակապատված է մանրահատակով, որը բավականին լայն տարածում ուներ 1960-ին: Մանրահատակը շեշտակի փոխում է դահլիճի «տրամադրությունը»՝ յուրահատուկ ռիթմ հաղորդելով ընդհանուր միջավայրին: Դահլիճի նստարանները տարիների վերակառուցման ընթացքում կրել են փոփոխություններ. սկզբնական շրջանում դրանք փայտից էին, հետագայում դարձան կաշեպատ:

Ակուստիկա: Կողապատերն ունեն հատուկ ակուստիկ սվաղ, որն ապահովում էր համեմատաբար լավ լսելիություն, հարկ է նշել, որ մանրահատակի առկայությունը նույնպես կրճատում է ռեվերբերացիայի ժամանակահատվածը: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ այս շրջանում դեռևս համաշխարհային պրակտիկայում նոր էր տարածում գտնում ակուստիկ նյութերի կիրառումը, այդ իսկ պատճառով պատերի պաստառապատման բացակայությունն առաջացնում էր վերջին շարքի վատ լսելիության, ձայնի ոչ լրիվ մաքրության և այլ նմա-

նատիպ խնդիրներ: Սրան գումարվում էր ֆիլմերի երբեմն անորակ ձայնագրությունը:

Լուսավորություն: Կինոթատրոններում բավականին արդյունավետ էր կազմակերպված բնական լուսավորությունը: Առաջին հարկի երեք ճակատները գրեթե ամբողջովին ապակեպատ էին (որոշ տեղայնացված նախագծերում հյուսիսային կամ հարավային մասում երբեմն պատուհանները բացակայում են, կամ կրճատվում էր դրանց քանակը): Ինչ վերաբերում է կինոդահլիճին, ապա երկու կողմերից մետրիկ շարքերով ընթանում են ութական նեղ ուղղաձիգ բացվածքներ: Արհեստական լուսավորությունը բաշխված էր հետևյալ ձևով. մի մասը բաժին էր ընկնում կողապատերի կոնսոլային լուսավորությանը, իսկ մյուսը՝ առաստաղային լուսավորությանը:

Տիպաբանություն: Կինոթատրոնը պատկանում է առանձին կառուցված միադահլիճ կինոթատրոնների արտակառուցված տիպին: Տիպային շինությունը նախատեսված էր 600 հանդիսատեսային տեղ հաշվարկված 7-8 բալ երկրաշարժի դիմակայելու համար, որպես կինոթատրոն նախատեսված էր կենտրոնական, այնպես էլ բնակելի հատվածներում տեղակայելու համար: Այս տիպային նախագիծն ամենալայն տարածումը գտավ կինոթատրոնների կառուցման ընթացքում: Այս նախագծով կինոթատրոններ կառուցեցին ինչպես Երևանում, այնպես էլ Լենինականում և այլուր (Գյումրի՝ «Հայաստան» կինոթատրոն, Եղեգնաձոր՝ «Արագիլ» կինոթատրոն, Արարատ՝ «Ավարայր» կինոթատրոն և այլն):

Էրգոնոմիկա: Ըստ նախագծի՝ մեկ մարդու հաշվարկով կինոթատրոնում բաժին է ընկնում 8,7 քմ տարածք, ինչը բավականին մեծ է, եթե հաշվի առնենք կինոթատրոնի տիպային բնույթը: Նմանօրինակ «շքեղությունն» իրականացված էր ընդարձակ ճեմասրահի հաշվին, ինչը թույլ էր տալիս ազատորեն օգտագործել ռեկրեցիոն գոտու մակերեսը: Ճարտարապետները նաև մեծ ուշադրություն են դարձրել նստարանների միջև եղած անհրաժեշտ հեռավորությանը, ըստ որի՝ նստարանների միջև հեռավորությունը կազմում էր մոտ 90 սմ: Կինոթատրոնի պարզ, հստակ հատակագծումն իր հերթին կարևոր էր տարհանման տեսանկյունից:

Կոմպոզիցիան և ոճը: Կենտրոնական դահլիճը ամֆիթատրո-

նային դասական դահլիճ է՝ հագեցած տվյալ ժամանակաշրջանի լավագույն տեխնոլոգիայով: Վերջինս ունի ֆունկցիոնալիստական ոճ, որը համադրված էր ազգային դասական նյութերի օգտագործման հետ, ինչն արտացոլում էր 1960-ական թվականների անցումային փուլը ազգային նեոդասականությունից դեպի զուսպ և ռացիոնալիստական ոգով ֆունկցիոնալիզմ: Չնայած զուսպ մոտեցումներին՝ կինոթատրոնի ընդհանուր մթնոլորտը հարմարավետ է հանդիսատեսի համար: Առ այսօր հաճախ կարելի է լսել նախկին հանդիսատեսի կողմից հիացական և ջերմագին վերաբերմունք կինոթատրոնների նկատմամբ, ինչը նույնպես սուբյեկտիվ գնահատական է կինոթատրոնի ինտերիերային մթնոլորտի վերաբերյալ: Կինոթատրոններում հատուկ ուշադրության է արժանի ճեմասրահների՝ 1980-ականների վերակառուցումը, որոնցից իր կահավորմամբ և շքեղությամբ աչքի էր ընկնում հատկապես «Արագած» կինոթատրոնի ճեմասրահը, որը համարվում էր տվյալ ժամանակաշրջանում ֆիլմերի փառատոների համար նախատեսված լավագույն կինոթատրոնը:

«Լալվար» կինոթատրոնի ինտերիեր-դիզայնը: Խորհրդային Միությունում քաղաքաշինության ներուժի զգալի մասն օգտագործվում էր արդյունաբերական քաղաքների կառուցման և զարգացման համար, քանի որ գործարանային քաղաքներն առանցքային նշանակություն ունեին վերջինիս համար: Նմանատիպ համեմատաբար մեծ քաղաքներից մեկն էլ Ալավերդին էր: Քաղաքային բնակչության համար, բացի արդյունաբերական տիպի կառույցներից, անհրաժեշտ էին նաև հանգստի և ժամանցի կենտրոններ, որտեղ կարելի էր անցկացնել օրվա ոչ աշխատանքային ժամերը: Հետաքրքրական է, որ Ալավերդին արդեն 1930-ականներին ուներ կինոթատրոնի շենք (ճարտարապետ՝ Տիրան Երկանյան): 1966 թ. տվյալներով արդեն Ալավերդիի հանքային հատվածներում գործում էին երեք կինոթատրոններ՝ «Անուշը», «Լալվարը» և Ամառային կինոթատրոնը, որոնք գտնվում էին «Լենինի» և «Շահումյանի» հանքերում: Այդ կինոթատրոններից ամենահինը՝ «Անուշ»-ը, կիսաքանդ վիճակում է, որի մի մասն այսօր ծառայում է որպես պահեստ:

Ճարտարապետություն: 1962-ին Խորհրդային Հայաստանում առաջին անգամ գործարկվեցին մինչև 400-տեղանոց կինոթատրոն-

ների տիպային նախագծեր: Հաջորդ տասնամյակում դրանք լայն տարածում գտան՝ կիրառվելով մինչև 1960-ականների վերջը: Այդպիսի օրինակ էր նաև 1968 թ. նախագծված Ալավերդիի «Լալվար» կինոթատրոնը: «Լալվար» կինոթատրոնը կատարված է Հայպետնախագիծ ինստիտուտի կողմից №2 արվեստանոցում: Տիպային նախագծի հեղինակը Հայաստանի վաստակավոր ճարտարապետ Գուրգեն Մուշեղյանն է: «Լալվար» կինոթատրոնն ունի բարդ տեղադրվածություն և հազվադեպ տիպ ներկայացնող արտակառուցված կինոթատրոնի օրինակ է:

Հատակագիծ և գոտևորում: Կինոթատրոնը երկու՝ 0 և -1 հարկերով, 0 հարկում գլխավոր ճակատի կողմից ապակեպատ ժապավենով, իսկ -1 հարկում արևմուտքից արևելք ձգվող ուղղանկյուն ծավալով շինություն է: Հավելյալ ծավալներ են ստեղծվում ճեմասրահի աստիճանների մասում, որոնք արտաքինից շեշտվում են: Գոտևորումը կատարված է հետևյալ կերպ. կինոթատրոնի մուտքերը տեղադրված են շինության երկու ապակեպատ ճակատներում: 0 հարկը տրամադրված է ճեմասրահին և սպասասրահին: Ճեմասրահի հյուսիս-արևելյան և հարավարևելյան հատվածում տեղադրված երկմարշ աստիճանները տանում են դեպի -1 հարկ: Երկու կողմերում գտնվող աստիճաններն ապահովում են մտնող և դուրս եկող հոսքերի ճիշտ կազմակերպումը: -1 հարկում տեղադրված են 400 հանդիսատեսի համար նախատեսված կինոդահլիճը, ինչպես նաև ադմինիստրատիվ, սանիտարահիգիենիկ գոտիները: Հաջող լուծում կարելի է համարել այն, որ վերջիններիս մուտքերը ճեմասրահից չեն, այլ գտնվում են -1 հարկի աստիճաններին կից մասում: Ճեմասրահից դեպի -1 հարկ և կինոդահլիճ տանող աստիճանների երկու կողմերում տեղադրված են նեղ, ուղղանկյունաձև, մետրիկ հորինվածք ունեցող պատուհաններ: Ճեմասրահի և աստիճանների միջև առկա է օժանդակ միջանցք, որը գործառութային առումով ոչ մի խնդիր չի լուծում, հակառակը, ստեղծում է հավելյալ մասնատվածություն, որը հակասում է շենքի բաց գոտևորման ընդհանուր մտահղացմանը:

Կինոդահլիճ: Կինոդահլիճն ուղղանկյուն հատակագծով տարածք է, որի պատերի երկու կողմերում տեղադրված են նեղ ուղղանկյունաձև 6 պատուհաններ կամ բացվածքներ: Կինոդահլիճի թե-

քությունը շեշտվում է նաև շինության արտաքին մասից, քանի որ շենքի այդ ծավալը գտնվում է թեք՝ ցածր նիշի վրա: Դեպի դահլիճ կարելի է մուտք գործել երկու եղանակով. առաջին հարկի ճեմասրահից իջնելով ներքև, որտեղ առկա են զուգահեռ մուտքեր կամ անմիջապես կինոդահլիճի երկու կողմերում սիմետրիկ տեղադրված մուտքերով: Այսպիսի լուծումը շատ տարածված է Ալավերդի քաղաքի երկհարկ շինություններում, երբ շենքի մի հարկը գտնվում է փողոցի վրա ավելի բարձր նիշում, մյուսը՝ բակի կողմից ցածր նիշի վրա: Բացի դրանից, անմիջական մուտքերը միաժամանակ ծառայում էին որպես հավելյալ հոսքերի բեռնաթափման միջոց:

Կոմպոզիցիան և ոճը: Ոճային առումով կինոթատրոնը մոդեռնիստական ոճի է՝ առանց ավելորդ դեկորատիվ տարրերի ու հարդարանքների, զուսպ լուծումներով: Ճեմասրահի համատարած ապակեպատումը կարելի է համարել Միս վան Դե Ռոյեի դպրոցի ազդեցությունը: Ճեմասրահի լուսամփոփները տեղադրված էին երկու զուգահեռ շարքով, ինչը հատկապես գիշերային ժամերին ապակեպատ և թափանցիկ ճեմասրահի և ճակատի հետ ստեղծում էր ուշագրավ տպավորություն: Կինոդահլիճի ինտերիերը նույնպես զուսպ է: Կինոթատրոնի նստարանները պաստառապատված էին կապույտ կտորով: Ինչպես գրեթե բոլոր կինոթատրոններում, այնպես էլ այս մեկում առկա էր բեմ:

«Լալվար» կինոթատրոնի ուսումնասիրությունը հատկապես կարևոր է, քանզի այն Հայաստանում արտակառուցված կինոթատրոնների փորձի եզակի օրինակ է, որը հնարավորություն է ընձեռում տեղական օրինակի վրա ուսումնասիրել աշխարհում կինոթատրոնի այս ոչ այդքան հաճախ հանդիպող տիպի առանձնահատկությունները: Տիպաբանական ընտրությունն իհարկե պայմանավորված էր Ալավերդիի ռելիեֆով. քանի որ կառույցների ծավալային լուծումները բարդանում են, դրա հետ մեկտեղ բարդացնելով հատակաձևը:

«Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի դիզայնը: Ճարտարապետություն: Խորհրդային մոդեռնիզմի ռացիոնալիստական ուղղությանը հարող լավագույն կառույցներից մեկն է համարվում «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը: Այն կառուցվել է 1966-ին ճարտարապետներ Սպարտակ Կնդեղցյանի և Թելման Հակոբյանի

նախագծով[3]: Շենքն ունի բավականին բարդ տեղադրվածություն: Կինոթատրոնն իր գլխավոր «ճակատային» մասով գտնվում է Թումանյան փողոցի առաջին գծի շարքում, իսկ մյուս մասը կից է «Մոսկվա» կինոթատրոնի ձմեռային շենքին: Այս տարածքում մինչև վերը նշված կինոդահլիճի կառուցումը գործում էր փայտաշեն 120-տեղանոց մեկ այլ կինոդահլիճ[4], որը, սակայն, չէր բավարարում իր տեխնիկական և քանակական չափանիշներով: Առաջին հարկը փողոցի նկատմամբ ունի - 60 նիշ[5]:

Հատակագիծ և գոտևորում: Գոտևորումը կատարված է հետևյալ բաժանումներով. առաջին հարկում են գտնվում դրամարկղը, ամառային սրճարանը և դեկորատիվ ջրավազանը: Դեկորատիվ ջրավազանի դիմացի պատին աչքի է ընկնում ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հովհաննես Մինասյանի՝ աբստրակտ ոճով իրականացված խճանկարային կոմպոզիցիան: Կառույցի մուտքի աստիճանների հատվածն անմիջապես դուրս է գալիս դեպի մայթեզր: Բազրիքը գտնվում է աստիճանների մեջտեղում՝ կարծես բաժանելով իջնող և բարձրացող հանդիսատեսների հոսքերը: Հեղինակները նախատեսել էին նաև հեռացող հոսքի ավելի արդյունավետ գոտի, որը գտնվում է կինոդահլիճի մեջտեղի հատվածում: Առաջին հարկի մյուս թևը կարելի է պայմանականորեն անվանել բացօթյա նախասրահ: Այստեղ հեղինակները յուրահատուկ լուծում են գտել՝ այդտեղ աճող ծառերը չկտրելու համար: Դրանք վերցված են բետոնե օղակի մեջ, որի միջով անցնում է ծառի բունը:

Կոմպոզիցիան և ոճը: Թերևս դժվար է գտնել մոդեռնիստական ոճն ավելի լավ բնորոշող շինություն, քան «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճը: Ծավալի և պլաստիկայի խաղը, բարդ հատակագծումը մշտապես դեպի իրեն են գրավում դիտողի ուշադրությունը: Այս շինության գեղագիտական արժանիքներից մեկն էլ այն է, որ նրա գեղագիտական, ֆունկցիոնալ, ինչպես նաև ոճական առանձնահատ-

---

[3] **Бальян К.**, Летний кинотеатр “Москва”, Москва, “Татлин”, 2018, стр. 18.

[4] Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, վկայագիր պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի, «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճ, Պետ. ցուցակի ցուցիչ՝ 1.6.178.3.2

[5] **Иванов А.**, Серая жемчужина Еревана, Шестидесятники №39-40, стр. 72-76.

կությունները չեն կորցնում իրենց արդիականությունը՝ արտահայտելով 1960-ականների ոգին և շեշտելով երևանցու կենսակերպը:

Կինոդահլիճ: Երկրորդ հարկը մոտ 800-տեղանոց ամֆիթատրոնային ասիմետրիկ հատակաձևով դիտադահլիճ է: Փողոցի աղմուկից խուսափելու համար ամֆիթատրոնի էկրանը և դահլիճն ուղղված են դեպի ձմեռային կինոթատրոնի պատը[6]: Ամֆիթատրոնի նստարաններն ունեին շարքերի հստակ և սխեմատիկ բաժանում: Հետևի վերջին շարքը միասնական է: Կառույցի բարդ տեղադրությունը և միաժամանակ ծավալատարածական առումով հեղինակների կողմից գտնված հնարամիտ լուծման համադրումը, որի շնորհիվ վերանում է կանխատեսվող սեղմվածության և ծանր ծավալի զգացումը, մինչ օրս էլ առաջացնում են մեծ հետաքրքրություն: Եվ սա է պատճառը, որ այն այսօր էլ ներկայացվում է տարբեր ցուցադրություններում, մրցույթներում:

Եզրակացություն:

Ամփոփելով կարելի է նշել, որ հայտնի ճարտարապետների եռյակի այս տիպային նախագիծը հաճախ քննադատության էր արժանանում իր զուսպ և պարզ լուծումների համար, սակայն հարկ է նշել, որ պարզ և հստակ լուծումներն այդ շրջանի գաղափարախոսական արտահայտությունն էին ինտերիերում և արվեստում առհասարակ: Հետագայում արդեն այլ կինոթատրոններում նույն ճարտարապետները գտնում են հնարքներ ֆունկցիոնալիստական և բրուտալիստական ոճերը համադրելու կրոնական ճարտարապետական տարրերի հետ՝ դրանք կիրառելով ինտերիերում:

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРОВ АРМЕНИИ В 1960-е ГОДЫ

РУЗАННА МИКАЕЛЯН

В статье представлены интерьеры армянских кинотеатров, построенных с 1960 по 1970 годы по типовым и индивидуальным проектам, их композиционные, зональные, стилистические и технические вопросы и решения. В рамках статьи особо выделены образцы лучших кинотеатров, построенных в

[6] **Ким Е.**, Ереван: камни, буквы, жизнь, Школа дизайна НИУ ВШЭ, Москва, 2021, стр. 163.

этот период, запомнившиеся и высоко ценимые по сей день архитекторами и дизайнерами.

Ключевые слова: типовой, кинотеатр, интерьер, дизайн, кинозал, план, экран.

INTERIOR DESIGN OF ARMENIAN CINEMA THEATERS IN THE 1960s

RUZANNA MIQAYELYAN

The article presents the interiors of Armenian cinemas built from 1960 to 1970 according to standard and individual projects, their compositional, zonal, stylistic and technical issues and solutions. Within the framework of the article, highlighted are the best cinemas of that period, which are remembered and highly appreciated by architects and designers up to this day.

Key words: typical, cinema theater, interior, design, cinema hall, plan, screen.